ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Գոհար Վարդապետյան, ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ալմաթի, Ղազախստան, 2025թ. հուլիսի 8-11-ը

3. Հրավիրող կողմը.

Արժույթի միջազգային հիմնադրամ (CCAMTAC), Համաշխարհային բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել «Medium-Term Debt Management Strategy» թեմայով աշխատաժողովին: Դասընթացի շրջանակներում ներկայացվել է ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի կողմից մշակված՝ պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարության մշակման վերլուծական գործիքը, որը թույլ է տալիս վերլուծել ընթացիկ պարտքի պորտֆելը, գնահատել այլընտրանքային ռազմավարությունների ծախս-ռիսկ հարաբերակցությունը՝ նախընտրելի ռազմավարությունը որոշելու նպատակով:

5. Քննարկված թեմաները

- Պարտքի կառավարման ռազմավարության նպատակների և շրջանակների սահմանում,
- Տվյալների մշակում և նախապատրաստում,
- Ընթացիկ պարտքի պորտֆելի վերլուծություն և գնահատում,
- Վերլուծական գործիքի ընդհանուր նկարագիրը,
- Ծախս-ռիսկ հարաբերակցությունը վերլուծական գործիքում,
- Հիմնական ռազմավարության սահմանում,
- Մակրոտնտեսական շրջանակ և ֆինանսավորման կարիք,
- Շոկային սցենարների սահմանում,
- Հիմնվելով ծախս-ռիսկ հարաբերակցության վրա՝ այլընտրանքային ռազմավարությունների սահմանում,
- Պարտքի կառավարման ռազմավարության փաստաթղթի մշակում,
- Գործիքի գործարկում և այլընտրանքային ռազմավարությունների արդյունավետության գնահատում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացին մասնակցում էին 7 երկրների 21 ներկայացուցիչներ: Նախատեսված դասախոսություններն ուղեկցվում էին թեմատիկ քննարկումներով և իրավիճակային վերլուծություններով: Արդյունքում, ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի կողմից մշակված MTDS վերլուծական գործիքի կիրառմամբ, մասնակիցներից կազմված յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվել է ամփոփիչ շնորհանդես:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

14 հուլիսի 2025թ.